ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

13 ՀՈՒՆԻՍԻ
2025 թ.
№ 9 (1146)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 60-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

Անփոփիչ աշխատաժողով Մանկավարժականում

Մանկավարժական համալսարանում հունիսի 12-ին ամփոփեցին բնագիտության, տեխնոլոգիայի, ճարտարագիտության և մաթեմատիկայի ոլորտի ծրագրի ներդրման արդյունքները: Հանդիպմանը ներկա էին ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը և ԿԳՄՍ նախարարության «Կրթական ծրագրերի կենտրոն» ՕԻԳ-ի տնօրեն Հայաստանի բարձրագույն կրթության նորարարությունների մրցակցային հիմնադրամի ղեկավար Գրիշա Հովհաննիսյանը, դասախոսներ, հանրակրթական դպրոցների վերոհիշյալ առարկաները դասավանդող ուսուցիչներ:

ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը շնորհակալություն հայտնեց ուսուցիչներին՝ համալսարանի Գերազանցության կենտրոնի ծրագրի շրջանակում ավարտական աշխատաժողովին մասնակցելու և կենտրոնի աշխատանքներին ծանոթանալու համար:

«Ծրագիրը տևել է 2 տարի, և այդ ընթացքում հաշվի առնելով ծրագրի առաջնահերթությունները, որ Մանկավարժական համալսարանն ունի STEM ուղղությունների մասնագիտությունների առումով, և շարունակաբար մտահոգ է իրականացնելու նպատակամետ խնդիրները, որոնք վերաբերում են ինտեգրված ուսուցման՝ մաթեմատիկայի, տեխնոլոգիայի, ճարտարագիտության, կենսաբանության, աշխարհագրության դասընթացների նորարար հնարավորություններին՝ միտված աշակերտների քննադատական մտածողությանը, վերլուծական մտքի, ստեղծագործական կարողությունների զարգացմանը և այն հմտություններին, որոնք ներկայացվում են 21-րդ դարի ուսուցչին՝ որպես փափուկ հմտություններ, հաշվի առնելով ձեր աշխատանքային փորձառությունը, իհարկե, նաև կարևորելով մշտական շարունակական վերապատրաստումների զարգացումները, որոնք հնարավորություն են տալիս ուսուցիչներին՝ խուսափելու ժամանակի մարտահրավերներից, և հաշվի առնելով արտերկրի լավագույն կրթական փորձը, ձեռնամուխ ենք եղել Գերազանցության կենտրոնում ներդնել ծրագրեր: Դրանք միտված են զարգացնելու այդ մասնագիտական կարողություններն ու հմտությունները, այն անհրաժեշտ զարգացումները, որ մենք կարող ենք ունենալ վերապատրաստումների առումով, և որտեղ շեշտադրվում են գիտահետ, հետազոտահետ և հատուկ կրթությունների, այդ թվում սոցիալական կարողությունների զարգացման հնարավորությունները, որոնք այդ կենտրոններում ուսուցիչների, աշակերտների և Հայկական պետական մանկավարժական համալսարանի մասնագիտական համակազմի, ակադեմիական կառույցների կողմից որպես լավագույն փորձառություն կարող են իրականացվել»,-ասաց ռեկտորը:

Ռեկտորը դրանք դիտարկեց որպես լավագույն հարթակ՝ աշակերտների մասնագիտական կողմնորոշման, հետաքրքիր միջավայր ներգրավելու և ինտեգրված դասերը բարելավելու համար:

Խոսելով մեզանում բնագիտական առարկաների դասավանդման կրթության որակի բարելավման անհրաժեշտության մասին՝ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանն ընդգծեց՝ վերջին տարիների հետազոտությունները ցույց են տալիս, որ իրականում մեր խնդիրները բնագիտության ուսուցման մասով պահպանվում են, բայց մեր ցանկալի առաջընթացը չունենք: Հետևաբար դա կանգնեցնում է խնդրի առաջ՝ ինչպես բարելավել բնագիտական առարկաների ուսուցանումը դպրոցներում:

Ժաննա Անդրեասյանը խոսեց խնդրի կարգավորմանն ուղղված կառավարական մի շարք ծրագրերի մասին՝ կապված դպրոցներում հանրապետական նոր չափորոշիչների ներդրման հետ, մասնավորապես ընդգծելով նոր պայմանների ու գործիքակազմի ընձեռումը՝ բնագիտական առարկաների դասավանդումն ավելի հասանելի ու հետաքրքիր դարձնելու ուղղությամբ: Նախարարն առանձնացրեց նախագծային ուսուցման միջոցով առարկան ներկայացնելու հնարավորության Տավուշի փորձը:

«Մենք գիտենք, որ բնագիտական առարկաների ուսուցումը չի կարող լիարժեք լինել, եթե չկան անհրաժեշտ պայմանները: Խնդրի լուծմանն է միտված Կառավարության ծրագրի թիրախային ուղղություններից մեկը՝ բոլոր դպրոցներում բնագիտական և տեղեկատվական տեխնոլոգիաների լաբորատորիաների բացումը,-ասաց նախարարը:- Արդեն 648 դպրոցներ ունեն անհրաժեշտ լաբորատորիաներ, և համոզված եմ, որ այս հագեցվածությունը բոլորովին այլ պայմաններ է ստեղծում այս առարկաների ուսուցման ու կրթական արդյունքի համար»:

Նախարարն ընդգծեց՝ ուսուցիչները պետք է կարողանան դասավանդումը կազմակերպել վերոհիշյալ լաբորատորիաների կիրառմամբ, և այդ գործում կարևոր դերակատարում ունի մանկավարժական կադրեր պատրաստող համալսարանը:

Ժ. Անդրեասյանը խոսեց Մանկավարժական համալսարանում պատրաստվող և գործող ուսուցիչների պատրաստման և վերապատրաստման մասին Գերազանցության կենտրոնում. «Այս կենտրոնի գործունեությունը հնարավորություն է տալիս, որպեսզի Մանկավարժական համալսարանն իրականացնի իր կարևորագույն առաքելություններից մեկը՝ լինի համակարգող ոլորտում, առաջնորդի, տանի դեպի նաև դասավանդման նորարարությունը, դեպի փորձը, դեպի մանկավարժական նոր գիտելիքն ու հմտությունը»:

Նախարարն ընդգծեց՝ դրամաշնորհային ծրագրերը թիրախային են և միտված են կրթական ոլորտի զարգացմանը: Այդ համատեքստում նա կարևորեց լաբորատորիաների արդյունավետ կիրառումը դասավանդման գործում, միաժամանակ շնորհակալություն հայտնեց Մանկավարժական համալսարանի թիմին՝ լավագույն աշխատանքի համար:

ՀՊՄՀ աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանը ներկաներին ծանոթացրեց ծրագրի նպատակներին ու գործողությունների հաջորդական քայլերին, Գերազանցության կենտրոնի գործունեությանը, stem.aspu.am հարթակին ու հեռանկարներին:

Հանդիպման վերջում ուսուցիչներն, ըստ մասնագիտական խմբերի, Գերազանցության կենտրոնում մասնակցեցին վարպետության դասերի:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Նորաչևության միտումները Մանկավարժականում

Մանկավարժական համալսարանում ավարտական որակավորման քննությունների շրջան է. ուսանողները նաև կյանքի քննություն են բռնում պրոֆեսորադասախոսական կազմի առաջ, ներկայանում տարիների ընթացքում ձեռք բերած գիտելիքներով ու հմտություններով:

Գեղարվեստական կրթության ֆակուլտետի առկա բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողների մայիսի 26-ի քննությունն այլ ձևաչափով էր՝ դեֆիլե-քննություն, որ վերածվեց նորաձևության միտումներն ամփոփող տոնի:

25 ուսանողներ ներկայացրին հագուստի մոդելավորման իրենց ստեղծագործական հավաքածուները, ընդհանուր առմամբ՝ 90 աշխատանք:

«Մեզանում արդեն ավանդույթ է դարձել հագուստի մոդելավորման մասնագիտության ուսանողների աշխատանքների ցուցադրումը կազմակերպել Մանկավարժական համալսարանի մեր մասնաշենքի բակում: Սա առաջին իսկական փորձությունն է մեր ուսանողների համար, որոնք հնարավորություն ունեն դուրս գալ շենքից և ամառային այս գեղեցիկ օրը հանրությանը ներկայացնել իրենց աշխատանքները: Շնորհակալ եմ և՛ ուսանողներին, և՛ մեր երկու ղեկավարներին՝ Արամ Նիկոլյանին և Հռիփսիմե Մարոնյանին, որոնց ամենօրյա աշխատանքի արդյունքը դուք կտեսնեք այսօր և կզմայլվեք»,- ասաց ֆակուլտետի դեկան Արա Հակոբյանը:

Այս տարվա ավարտական կուրսի ուսանողներն առաջին անգամ իրենց իսկ ձեռքով ստեղծած հագուստները ներկայացնում էին արվեստասեր հասարակությանը: Ցուցադրմանը ներկա էին համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը, ուսանողներ, ծնողներ, հյուրեր, ոլորտի մասնագետներ:

Հագուստների ցուցադրման վերնագրերը բավականին խոսուն էին և կարծես թե նոր շունչ էին հաղորդում հագուստի մոդելավորման բնագավառին, իսկ հագուստները հիմնականում ներկայացնում էին պրոֆեսիոնալ մոդելները:

➤6

Ռեկտորը մասնակցեց միջազգային 10-րդ առցանց գիտաժողովին

Մանկավարժական համալսարանի ռեկտոր Սրբուհի Գևորգյանը մասնակցեց «Կրթական տարածքը տեղեկատվական դարաշրջանում» միջազգային 10-րդ առցանց գիտաժողովին: Ռուսաստանի կրթական ակադեմիայի նախաձեռնությամբ անցկացվող ձեռնարկին մասնակցում էին Հայաստանի, Ռուսաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Ուզբեկստանի և այլ երկրների գիտակրթական հանրույթի ներկայացուցիչներ, մանկավարժներ, դասախոսներ, ասպիրանտներ, ուսանողներ և այլն:

Ռեկտոր Սրբուհի Գևորգյանը ելույթ ունեցավ պլենար նիստում՝ ասելով՝ մենք ապրում ենք բացառիկ ժամանակաշրջանում, երբ գիտելիքը, տեղեկատվությունն ու տեխնոլոգիաները ձևավորում են ոչ միայն կրթության բովանդակությունը, այլև կրթական տարածք: «Մանկավարժությունը, որի հենարանը դեռ երեկ փոխազդեցության ավանդական ձևաչափն էր, այսօր առերեսվում է թվային փոխակերպմանն առնչվող մարտահրավերների հետ»:

«Սա միայն պարզագույն տեխնիկական հարմարեցման հարց չէ, այլ խորքային՝ փիլիսոփայական, մշակութային, մարդաբանական: Անհրաժեշտ է հասկանալ՝ ինչպես պահպանել անձնային, զարգացնող և բարոյապես պատասխանատու կրթական համակարգը՝ ալգորիթմների, տվյալների բազաների և արհեստական բանականության աշխարհում»,-ասաց ռեկտորը:



Ռեկտորը խոսեց իր ղեկավարած կրթական հաստատության մանկավարժական ավանդույթների ու այնտեղ ընթացող նորարարական կրթական գործընթացների, ինչպես նաև կրթական համակարգի, մասնավորապես տեղեկատվական մարտահրավերների մասին: Պրոֆեսորը միաժամանակ դիտարկեց այն որպես մանկավարժի դերը, կրթական սահմանների տեղաշարժը, թվային տեխնոլոգիաների վրա հիմնված սերունդների և մշակույթների երկխոսությունը վերաիմաստավորելու հնարավորություն:

Գիտաժողովը ըստ ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանի, այն հարթակն է, որտեղ կարելի է մտածել և գտնել նոր՝ ներառական, ճկուն, անվտանգ, բարոյական, մարդակենտրոն լուծումներ: Ռեկտորը վստահ է, որ այդ հարթակի քննարկումները ինստիտուցիոնալ նոր լուծումների և կրթական համակարգում նոր հարաբերությունների ձևավորման հիմք կդառնան:

Միջազգային գիտաժողովի աշխատանքները շարունակվեցին 5 մասնաճյուղերում, որոնք վերաբերում էին պատմական հիշողությանը և պատմական կրթությանը, կրթական տարածքի ձևավորման փիլիսոփայական և մեթոդոլոգիական հիմքերին, դիդակտիկայի զարգացմանը ընդհանուր կրթական տարածքի պայմաններում, արհեստական բանականության ասպարեզում հոգեբանական և մանկավարժական բաղադրիչներին, թվային դարաշրջանում ավանդական բարոյահոգեբանական և ընտանեկան արժեքներին:

Վերջին դասը՝ երախտագիտության ուղերձներով

Սերգո Երիցյանը հեռուստատեսություն բերեց հասարակ մարդու ազատ, անկաշկանդ խոսքը, կարողացավ գոհացնել ավանդապահ հեռուստադիտողին, շեշտադրեց ոլորտի հիմնախնդիրները և գնաց դրանց լուծումները գտնելու հետևից. Մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի դահլիճում բանասիրական գիտությունների դոկտոր, ՀՊՄՀ Լրագրության ամբիոնի պրոֆեսոր Սերգո Երիցյանի ծննդյան օրը խորհրդանշվեց նրա մասին պատմող ֆիլմի ցուցադրությամբ: Ներկա էին Մանկավարժական համալսարանի և հանրապետության բուհերի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ, անվանի լրագրողի տարբեր տարիների ուսանողներ:

Ֆիլմը նկարահանվել է ՀՊՄՀ լրագրության ամբիոնի վարիչ, դոցենտ Լևոն Գալստյանի սցենարի հիման վրա, իսկ ռեժիսորը նույն ամբիոնի դասախոս, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Արսեն Առաքելյանն է: Ռեժիսորն իր այս աշխատանքը համարում է տեղեկատվական, վավերագրական հեռուստաֆիլմ. այստեղ Սերգո Երիցյանի կենսապատումն է՝ տարբեր ճամփորդություններով ու հայկական հետքի որոնումներով:

Վավերագրական, ինչ-որ տեղ նաև գեղարվեստական ֆիլմը մարդկային մեկ ճակատագրի պատմություն է՝ անցյալից դեպի ապագան գնացող ուղերձներով, շարունակվող ճամփորդության հետաքրքիր կանգառներով, որոնցից յուրաքանչյուրում առկա է գիտնականի, հետազոտողի, լրագրողի ստեղծագործական անվերջ փնտրտուքը... Թվում է՝ այդ ստեղծագործական ճամփորդությունը չի ավարտվել և շարունակվում է ներկայի մեջ: Եվ պատահական չէ, որ ֆիլմը վերնագրվել է «Շարունակվող ճամփորդություն»:

Օրը խորհրդանշական է՝ ասաց ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի հեռուստառադիոլրագրության ամբիոնի վարիչ Լևոն Գալստյանը՝ ընդգծելով, որ այն նվիրված է լրագրության և լրագրողական կրթության ասպարեզում մեծ ներդրում ունեցած մի մարդու՝ Սերգո Երիցյանի հիշատակին:

Լևոն Գալստյանը շնորհակալություն հայտնեց ֆիլմի ողջ ստեղծագործական

խմբին՝ արվեստի վաստակավոր գործիչ, ֆիլմի պրոդյուսեր Արմեն Ամիրյանին:

«Օրվա հանդիպումը խորհրդանշական կոչեցինք «Վերջին դաս»՝ հիշելու մի բան, որ այս դասերից մեկը երախտագիտության դասն է: Ես շատ կուզեի, որ հատկապես մեր ուսանողներն իրենց մեջ պահեն երախտագիտության զգացումը իրենց ծնողների, ավագ սերնդի, ավանդույթի նկատմամբ և իրենց սիրելի դասախոսի, որի հետ շփվելու առիթ ունեցան»:

Բանախոսը տեղեկացրեց, որ ֆիլմում հետաքրքիր տեխնոլոգիական հնարքներ են կիրառվել, նաև արհեստական բանականության որոշակի գործիքակազմով: Ֆիլմը տեսախցիկի հայացքով էր կառուցված, հեղինակի տեքստը կարդում էր վաստակավոր լրագրող Վարուժան Օլքինյանը:

Ֆիլմը հուզմունքի բազում պահեր պարգևեց ներկաներին: Գիտության, կրթության, արվեստի, հեռուստատեսության ոլորտի ճանաչված անհատներն արժևորեցին Սերգո Երիցյանի գործունեությունը, ում համար ժուռնալիստիկան գեղարվեստական մտածողություն էր:

Լևոն Գալստյանը կարևորում է այն հանգամանքը, որ Սերգո Երիցյանի մասին ֆիլմը ստեղծվել է հենց այն կրթական միջավայրում, որտեղ ինքն էր վերջին տարիներին, իր գործընկերների, ընկերների ջանքերով, միաժամանակ ընդգծում է՝ տարբեր բնագավառների գիտնականներ ու արվեստագետներ իրենց աշխատանքով որոշակի հետք են թողնում և նվաճում են հանրության համակրանքը, սակայն քչերն են, որ ստեղծում են համակարգեր: Եվ այդ քչերից մեկը Սերգո Երիցյանն էր, որը կարողացավ Հայաստանի Հանրապետության բուհական միջավայրում հիմնել լրագրության ակադեմիական դպրոցը, լրագրության դասավանդման կրթական հիմքերն ստեղծեց իր մենագրություններով, հետազոտություններով, հոդվածներով»:

100-ից ավելի մասնագիտական և հայ անվանի գործարարների նվիրված գրքերի հեղինակ և համահեղինակ՝ սա անվանի լրագրողի ու գիտնականի տքնաջան աշխատանքի մի մասն է միայն, «Կարծիք» հաղորդաշար, հայկական հետքի որոնումներով արտասահմանյան շրջագայություններ, նախարարի ու պատգամավորի աշխատանքային ծանր ու հագեցած տարիներ...

Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի անունից ռեկտոր Սրբուհի Գևորգյանը ողջունեց ֆիլմի ստեղծագործական խմբի մտահղացումը. «Սա շարունակվող ճամփորդություն էր դեպի անհատականություն Սերգո Երիցյանը, որտեղ մենք ականատես եղանք անձի կողմից ստանձնած բազմաթիվ սոցիալական կարգավիճակներում այն յուրահատուկ դրսևորումներին, որը թերևս կարելի է բնութագրել երկու բառով՝ հոգածություն և նվիրում: Ֆիլմում խոսեցին գործընկերներ և ուսանողներ, նաև մարդիկ, որոնք այդ ժամանակաշրջանի Հայաստանի պատմության կերտման կիզակետում էին գտնվում, մարդիկ, որոնք ճանաչելով Սերգո Երիցյանին, էկրանից մեզ փոխանցեցին նրա անսահման նվիրումը մարդկանց և իր մասնագիտությանը: Այդ մարդկանց ես կբնորոշեմ որպես երջանիկներ, որոնք հնարավորություն են ունեցել փոխներգործելու, դասեր վերցնելու և դասերի մեջ կարևորելու այն բովանդակությունը, որը որպես կյանքի առաքելություն Սերգո Երիցյանը կրում էր իր մեջ և որպես պատգամ թողել է իր ուսանողներին»:

Ռեկտորն ընդգծեց՝ շարունակվող ճամփորդությունը մեզ տանում է դեպի նրա գործերը, որոնք միշտ լույս և ներդաշնակություն են սփռում, տանում է հայ ընտանիքում հայրական հոգատարության, սիրո ու ջերմության տիրույթ, դեպի քաղաքական գործիչ ու գործընկեր. և իր ստանձնած բոլոր սոցիալական կարգավիճակներում նա երջանիկ էր:

«Կինոֆիլմից ամբողջովին սեր ու բարություն էր ժայթքում, որը յուրաքանչյուրիս համար շարունակական առանձին արահետ, ճանապարհ, ուղի է դեպի մեծն անհատականություն Սերգո Երիցյանը»,-ամփոփեց ռեկտոր Սրբուհի Գևորգյանը՝ շնորհակալություն հայտնելով ֆիլմի համար՝ որպես ուսումնական ձեռնարկ, որից հենց լրագրության բաժնի ուսանողները կկարողանան շարունակական դասեր քաղել:

Ճանաչված գիտնականի ու հեռուստալրագրողի ուսանողները հիշում են և հուշերի միջից նորովի քաղում նրա դասերի արժեքավոր ուղերձները, ներկայի մեջ երբեմն-երբեմն հետ նայելով՝ փնտրում մարդկային կյանքի երջանկության շարժիչ ուժը:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Ավետիք ԻՍԱՀԱԿՅԱՆ–150

Եվ ժողովուրդը նրան Վարպետ կոչեց

- Սի՛րտըս երկինք է.
Ամեն արարած
Աստղ ունի այնտեղ-
Գահ ունի այնտեղ:

Ավ. ԻՍԱՀԱԿՅԱՆ

«Ասում են՝ գրողին ճանաչելու համար պետք է լինել նրա հայրենիքում»,-իրավացիորեն նկատեց Բանասիրական ֆակուլտետի դեկան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Գալստյանը:

ՀՊՄՀ Բանասիրական ֆակուլտետի Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Ալիտա Դոլուխանյանի նախաձեռնությամբ Ավետիք Իսահակյանի ծննդյան 150-ամյակի հոբելյանական մեկնարկը տրվեց Գյումրիում՝ Ավետիք Իսահակյանի տուն-թանգարանում՝ գրողին նվիրված գիտաժողովով և գիտաժողովի հոդվածների ժողովածուի շնորհանդեսով:

«Իսահակյանը թողել է գրական այնպիսի ժառանգություն, որը ժամանակի հետ մշտապես քայլելու է առաջ՝ իր հետ տանելով համամարդկային ու ազգային վսեմ գաղափարներ,-ասաց ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալիտա Դոլուխանյանը՝ ողջունելով գիտաժողովի մասնակիցներին: -Իսահակյանը հրաշալի թարգմանիչ էր ու ծանոթ էր աշխարհի գրավոր ու բանավոր գրականությանը. Նա խստորեն մերժում էր ազգային խտրականությունը ու զգուշացնում էր ոգու սովի սպասվող սպառնալիքի մասին»:

Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոսների զեկուցումները վերաբերում էին Ավետիք Իսահակյանի ստեղծագործության մի շարք խնդիրներին:

Ֆակուլտետի փոխդեկան, Հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու Նաիրա Խաչատրյանը «Ավետիք Իսահակյանի սիրո չընդհատվող հեքիաթը» զեկուցման մեջ խորամուխ լինելով բանաստեղծի սիրային պատմությունների լաբիրինթոսում՝ հանգել էր մի հստակ եզրակացման, որ նա հոժարակամ ընտրել է հավերժական սիրահարի ճակատագիրը՝ որպես հոգու ճախրանք. «Իսահակյանի սիրո պատմությունն իր մեջ բովանդակում է հետաքրքիր ու առեղծվածային մի դրամա. այն քնարական է և այնքան հուզիչ, որ կերտվում է բանաստեղծական մի վերերկրյա միջավայր, ուր ընթերցողն ակամա դառնում է հեգ սիրահարի սենտիմենտալ հույզերի ճիշտ հասցեատերն ու հավատարիմ կարեկիցը»:

Ն. Խաչատրյանի փաստմամբ՝ «իսահակյանական բոցավառ սիրո աշխարհում համատեղվում են երևակայական դրախտն ու դժոխքը, իրական հրճվանքն ու հիասթափությունը, ապրելու իմաստն ու մահվան առեղծվածը»:

Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու, Մաշտոցի անվան Մատենադարանի Ձեռագրագիտության բաժնի ավագ գիտաշխատող Լիլիթ Հովսեփյանի զեկուցման թեման Ավ. Իսահակյանի պատմվածքներն էին. նա անդրադարձավ հեղինակի՝ 1900-ական թվականներից պարբերական մամուլում, ապա առանձին գրքերով ու «Երկերի ժողովածու»-ների մեջ լույս տեսած պատմվածքներին, որոնք Իսահակյանի կյանքի վերաիմաստավորված պատառիկներն են և ստեղծագործության ուշագրավ մասն են և, ի տարբերություն քնարերգության, համեմատաբար քիչ ուսումնասիրված:

«Իսահակյանը, կարևորելով խոսքի հղկվածությունը, պատկերի խտացումը ընդհուպ մինչև մեկ բառ կամ արտահայտություն, կերպարների կոնկրետությունը և նրանց հոգեբանության ամենանուրբ կողմերի վերհանումը, հյուսում է լեզվական կատարելությամբ օժտված ժամանակագրության տպավորություն թողնող էտյուդներ»,-եզրակացրեց Լիլիթ Հովսեփյանը՝ վստահեցնելով, որ գրողի հերոսները միտված են բացահայտելու հեղինակի իղձը՝ հասկանալ կյանքի առեղծվածն ու հնարավոր դարձնել, որ մարդկության քարավանը գեթ մի պահ ընթանա արդարության ուղիով:

«Ավետիք Իսահակյանի հարուստ ու բազմաժանր գրականության մեջ անմոռանալի ու կարևոր են նրա լեգենդներն ու բալլադները, որոնք քաղված են աշխարհի տարբեր ազգերի գրականություններից և ունեն համամարդկային բնույթ». ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու Ռուզան Դոլուխանյանը ներկայացրեց դպրոցում դրանց ուսուցման առանձնահատկությունները, ընդգծելով, որ շատերն ունեն մանկավարժական, դաստիարակչական բովանդակություն:

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Գայանե Մարդյանը ներկայացրեց «Ավետիք Իսահակյանի «Համբերանքի չիբուխը» պատմվածքի ուսուցումը ավագ դպրոցում»՝ կարևորելով պատմվածքում մարդու աշխատասիրության ու ազնիվ աշխատանքի փառաբանումը, անարդարության դեմ ժողովրդական ըմբոստացումը:

«Համբերանքի չիբուխը» պատմվածքը հնարավորություն է տալիս ուսուցչին խորացնելու աշակերտների գիտելիքները հայ նոր գրականության մեջ տեղ գտած պատմվածքի ժանրի վերաբերյալ, նաև յուրացնել տալու առած-ասացվածքների մասին եղած գրականագիտական գիտելիքները՝ դրանք բացատրելով պատմվածքում տեղ գտած, ժողովրդական բանահյուսությունից եկող մի քանի օրինակներով»,-ընդգծեց Գ. Մարդյանը, միաժամանակ անդրադառնալով պատմվածքի ընտիր գրական լեզվին, ոճին ու տիպական կերպարին՝ զուգահեռներ տանելով Օհան ամու և գրական այլ հայտնի ստեղծագործություններում կերտված անձերի միջև:

ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի տնօրեն, բանասիրական գիտությունների թեկնածու Մայա Գրիգորյանն անդրադարձ արեց Հայաստանի պատմական ճակատագրին Ավետիք Իսահակյանի նամակներում: Նա ընդգծեց՝ գրողի գրական ժառանգության նամականին ունի իր արժանի տեղը, սակայն քիչ է արժանացել հանրության ուշադրությանը. «Իսահակյանի նամակների մեջ բացահայտված է իրական գրողը, հասարակական ու քաղաքական գործիչը, տեսաբանը, ընտանիքի հայրը, ամուսինը, կենցաղը և այլն: Ահա ինչու գրողի վերաբերյալ ցանկացած թեմա ուսումնասիրելիս նրա նամականին լավագույն աղբյուրներից մեկն է»: Նամակներում ուրվագծվում է «պատմական Հայաստանի փառահեղ ու հերոսական անցյալը, Հայաստանի ներկա ճակատագրի հանդեպ գրողի խոր հոգածությունը և ապագայի տեսլականը»:

Զեկուցողն ընդգծեց՝ նամակներում պատմական Հայաստանի անցյալը ներկայացված է ոչ միայն որպես հուշագրական նյութ, այլև որպես գաղափարական, հոգևոր ու ազգային դիմագիծ կերտող առանցք:

«Ավ. Իսահակյանի հուշապատումը կարծես հայ նոր գրականության պատմության դասագիրք լինի. հուշերի միջոցով բանաստեղծը պատկերել է 19-րդ դարավերջի և 20-րդ դարի հայ գրականության խոշորագույն դեմքերի հուշ-դիմանկարները, պատմել նրանց հետ իր հանդիպումների, բարեկամական զրույցների մասին». «Ավետիք Իսահակյանի հուշապատումը» զեկուցման մեջ ներկայացրեց Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասպիրանտ Հովհաննես Սարգսյանը:

Իսահակյանն իր հուշերում ներկայացրել է նաև իր ապրած ժամանակաշրջանի մտավորականության ընդհանուր դիմապատկերը՝ համեմելով բնության, գյուղական ու քաղաքային պատկերների, պատմական տեղավայրերի, արվեստի տարաբնույթ իրողությունների մասին հրաշագեղ պատկերներով ու իր բնորդների հետ երկխոսություններով»,-ամփոփեց զեկուցողը:

Գիտաժողովն ամփոփեց ֆակուլտետի դեկան Աշոտ Գալստյանը. նա անդրադարձավ «Աբու-Լալա Մահարի» պոեմի լեզվաոճական շերտերին՝ ներկայացնելով «հայ գրականության փիլիսոփայական հենք ունեցող գլուխգործոցի նախապատմությունը, տաղաչափական հատուկ հնարքով գրված պոեմում անհատի ողբերգությունը՝ որպես համամարդկային ցավի ու տառապանքի խտացման արտահայտություն»:

Պրոֆեսորը հանգամանորեն խոսեց պոեմում օգտագործված պատկերավորման-արտահայտչական միջոցների մասին, անդրադարձավ մակդիրների, համեմատությունների, փոխաբերությունների կիրառությանը, երկխոսություններին, հրամայական եղանակի բայաձևերի հաճախականությանը և սիմվոլներին, որոնք բանաստեղծական պատկերավորման եղանակներ են:

Աշոտ Գալստյանը շնորհակալություն հայտնեց թանգարանի տնօրենությանը՝ գրողի հարկի ներքո ջերմ հյուրընկալության, իսկ էքսկուրսավար Լիլիթ Ավետիսյանին՝ թանգարանի նյութերը պատշաճ ու գեղեցիկ ներկայացնելու համար:

«Ճիշտ է, այս տունը շատ ոգեղեն է, բայց այսօր այն հույժ ոգեղեն դարձավ ու ներշնչվեց,-ասաց թանգարանի տնօրեն Կարինե Վիրաբյանը:-Իսահակյանը միշտ ասել է՝ մարդ պիտի ապրի այնպես, որ թողնի երկու անուն՝ մեկը տանելու, մյուսը թողնելու: Այսօր ևս մեկ անգամ հաստատվեց, որ նա թողեց անուն և ապրեց որպես լեգենդ՝ մեծապես սիրված ժողովրդի կողմից: Որքան հետ ենք գնում ժամանակի մեջ, այնքան բացահայտում ենք նրա գործերի արդիականությունը, նրա բոլոր ստեղծագործությունները, մտորումները, վախերը և ուրախությունները մենք վերապրեցինք այսօր: Իսահակյանը ցուպը ձեռքին շրջեց աշխարհից աշխարհ, կրթվեց ու համաշխարհային ճանաչում ձեռք բերեց, բայց մնաց ժողովրդական, ու սիրված, և ժողովուրդը նրան Վարպետ կոչեց»:

Իսահակյանի արձակի ու պոեզիայի գոհարներով, գրական ժառանգության էջերի նոր բացահայտումներով լեցուն օրը ոգեղեն պահեր պարգևեց ոչ միայն Մանկավարժական համալսարանի դասախոսներին և ուսանողներին, այլև իսահակյանական հնամյա օջախը ապրեցնող տուն-թանգարանի աշխատակիցներին:

Միլվա ԱՍՐՅԱՆ

Ռուսաց լեզվին նվիրված համաժողով

Մանկավարժական համալսարանում ամցկացվեց երկօրյա համաժողով՝ «Խաղալով» և «Ռուսերեն Today» կրթական նախագծերի և ՀՊՄՀ-ի Ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի համատեղ նախաձեռնությամբ, նվիրված ռուսաց լեզվի դասավանդման և մեթոդիկաների խնդիրներին: Արդեն 5-րդ անգամ Երևանում անցկացվող համաժողովը նախատեսված էր ռուսաց և այլ լեզուների դասավանդողների, դասագրքերի և ձեռնարկների հեղինակների, դպրոցների տնօրենների և և բուհերի ամբիոնների վարիչների համար:

Տարբեր ոլորտների զարգացումները կրթության համակարգի նոր խնդիրներ ու մարտահրավերներ են առաջ բերում: Մասնակիցները երկու օր ակտիվորեն քննարկեցին լեզուների ուսուցման տարբեր ասպեկտներ, փոխանակեցին դասավանդման իրենց մեթոդներն ու տեխնոլոգիաները, փորձեցին հանդես գալ պրակտիկ եզրակացություններով ու գտնել լուծումներ, նաև անցկացվեցին վարպետաց դասեր: Աշխարհի տարբեր երկրների ոլորտի մասնագետները հնարավորություն ունեցան օնլայն ձևաչափով միանալ համաժողովին:

Առաջին օրվա նիստում ներկաները լսեցին բանասիրական գիտությունների թեկնածու, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՊՄՀ Ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Նաիրա Դալյանի «Ռուսաց լեզուն Հայաստանում» զեկուցումը:

Պրոֆեսոր Նաիրա Դալյանը ողջունեց ռուսաց լեզվի դասավանդման ժամանակակից հարցերի շուրջ նախագծի մասնակիցներին՝ ընդգծելով Մանկավարժական համալսարանի առաքելությունը մանկավարժական կադրերի պատրաստման գործում և վստահեցնելով, որ ներկա համաժողովը նոր գիտելիքներով կզինի նրանց՝ մասնագիտության մեջ ավելի արդյունավետ իրացնելու իրենց գիտելիքները:

«Ներկա ֆորումը ռուսաց լեզվի դասավանդման ժամանակակից հիմնահարցերը քննարկելու բացառիկ հարթակ է,-ասաց զեկուցողը,-իսկ ռուսաց լեզուն պարզապես լեզու չէ, այլ կենդանի օրգանիզմ՝ զարգացող, հարստացող, նոր պայմաններին հարմարվող: Ռուսաց լեզուն միավորում է տարբեր ազգությունների ու մասնագիտությունների մարդկանց, մեզ հնարավորություն է տալիս սովորել, ստեղծել և փախանակել մտքերն ու զգացողությունները»:

Զեկուցողը ներկայացրեց Հայաստանի հանրակրթական դպրոցներում և բուհերում, մասնավորապես ՀՊՄՀ-ում ԽՍՀՄ-ի և հետ ԽՍՀՄ-յան ժամանակաշրջանի ռուսաց լեզվի դասավանդման ընդհանուր պատկերը՝ ըստ ժամաքանակային և որակական վերլուծության:

«Չնայած տեղի ունեցած փոփոխությունների, ռուսաց լեզուն շարունակում է լայնորեն օգտագործվել և՛ որպես մայրենի լեզու, և՛ որպես այս երկրներում տարբեր ազգությունների մարդկանց միջև լեզվական արգելքը հաղթահարելու միջոց: Սակայն կիրառման և ուսումնասիրության պայմանները լրջորեն փոխվել են, և հետազոտողները պետք է ուսումնասիրեն օտարալեզու միջավայրում ռուսաց լեզվի բնութագրման այնպիսի սոցիալ-լեզվաբանական բնութագրիչներ, որոնք թույլ կտան օբյեկտիվ ներկայացնել այս լեզվի դիրքն այսօր և եզրակացություն անել նրա հեռանկարների մասին մոտ և հեռու ապագայում»,-ասաց Ն. Դալյանը: Նա պատմականորեն անդրադարձավ ռուսաց լեզվի ուսումնասիրության որակին և ուսուցման խնդիրներին՝ դասավանդման բովանդակությանը, մեթոդներին, տեխնոլոգիաներին:

Մոսկվայի Արևելյան լեզուների Լազարյան ինստիտուտի առաջին ռեկտոր Հարություն Ալամդարյանից, Գաբրիել Այվազովսկուց մինչև Խաչատուր Աբովյան՝ զեկուցողը ներկայացրեց հայ մեծ մտածողների ներդրումը հայերի շրջանում ռուսաց լեզվի ուսուցման ու զարգացման, ձեռնարկների ստեղծման գործում:

Զեկուցողը նշեց՝ բարդ ժամանակներում ենք ապրում և մշակույթների երկխոսության, փոխազդեցությունների բացակայությունը բերում է պատերազմներ երկիր մոլորակի վրա: Նա հույս հայտնեց, որ մշակույթը և հումանիզմը կհաղթեն, իսկ մեր աշակերտները և ուսանողները կձգտեն երջանիկ ու խաղաղ ապագայի:

Այնուհետև ելույթ ունեցան «Մեր ապագան» կրթամշակութային բարեգործական հիմնադրամի գործադիր տնօրեն Վահրամ Կարապետյանը, այլ մասնակիցներ ևս, որոնք հանդես եկան սեփական նախագծերով ու կարճ ելույթներով:

Երկու օր շարունակ 5 մասնախմբերում, քննարկեցին օտար լեզուների դասավանդման նոր մոտեցումների հիմնահարցեր՝ կապված թվային ուսուցման, դասարանային և անհատական դասավանդողների հետ, անդրադարձան լեզուների ուսուցման ընթացքում ուղեղում ընթացող գործընթացներին:

Միլվա ԱՍՐՅԱՆ

Վերապատրաստվեցին Լապեենրանտայի տեխնոլոգիական համալսարանում

ՀՊՄՀ Աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանի գլխավորած պատվիրակությունը հունիսի 3-6-ը Ֆինլանդիայի Լապեենրանտայի տեխնոլոգիական համալսարանում էր:

Էրազմուս+ DeSIRe (Հայաստանի և Վրաստանի բուհերում 21-րդ դարի աշխատաշուկայի պահանջներին համահունչ փափուկ հմտությունների զարգացում) ծրագրի շրջանակում անցկացված վերապատրաստումներին մասնակցում էին նաև Միջազգային համագործակցության և ծրագրերի կառավարման կենտրոնի ղեկավարի պաշտոնակատար Անահիտ Փանոսյանը, Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի Գիտության և միջազգային համագործակցության հարցերով դեկանի տեղակալ Սուսաննա Մուրադյանը:

Վերապատրաստման ընթացքում ծրագրի մասնակիցները ծանոթացան մեդիա և թվային գրագիտության, առաջնահերթությունների սահմանման և որոշումների կայացման հմտություններին, սովորեցին՝ ինչպես լուսանկարների և տեսանյութերի միջոցով արտահայտել անձնական նպատակներն ու խթանել վերլուծական մտածողությունը: Բացի այդ, Մանկավարժական համալսարանի ներկայացուցիչները ուսումնասիրեցին արդյունավետ որոշումներ կայացնելու նպատակով կրթական գործընթացում տվյալների վերլուծության կիրառումը, ինչպես նաև համակարգային ինժեներական մոտեցումները, որոնք կարևոր դեր են կատարում բարդ միջավայրում առաջնահերթություններ սահմանելու հարցում:

Վերապատրաստման վերջին օրը նվիրված էր ստեղծագործական մտածելակերպի և խնդիրների լուծման հմտությունների զարգացմանը. պրոֆեսոր Չեչուրինը ներկայացրեց նորարարական լուծումների համակարգային մոտեցման TRIZ մեթոդաբանությունը: Այն վերաբերում էր ինտերակտիվ քննարկումների և գործնական վարժությունների միջոցով ստեղծագործական մտածողության՝ որպես հմտության, զարգացնելու գործընթացին:

Վերապատրաստման ընթացքում առանձնահատուկ ուշադրություն դարձվեց նաև «Հուզական և սոցիալական ինտելեկտ» թեմայով զանգվածային բաց առցանց դասընթացի (MOOC) նախագծմանը: Այն նպատակ ուներ զարգացնել համալսարանական աշխատակիցների և ուսանողների հուզական ու սոցիալական ինտելեկտը՝ կիրառելով ժամանակակից մեթոդներ:

Հիշեցնենք, որ Էրազմուս+ DeSIRe (Հայաստանի և Վրաստանի բուհերում 21-րդ դարի աշխատաշուկայի պահանջներին համահունչ փափուկ հմտությունների զարգացում) եռամյա ծրագրի համակարգողը Վանաձորի պետական համալսարանն է:

ՀՊՄՀ գերազանցության կենտրոնում

Մանկավարժական համալսարանի «Բնագիտություն, տեխնոլոգիա, ճարտարագիտություն և մաթեմատիկա» ոլորտի գերազանցության կենտրոնի աշխարհագրության լաբորատորիան հյուրընկալել էր Երևանի, Արարատի և Արմավիրի մարզերի մի շարք դպրոցների աշխարհագրության ուսուցիչների: Նպատակն էր ծանոթացնել կառույցի նորագույն սարքավորումներին, մասնավորապես՝ եղանակային դիտումների համար նախատեսված դպրոցական օդերևութաբանական տեղակայանին, քարտեզագրական մի շարք գործիքների՝ կուրվիմետր, կողմնացույց և այլն, որոնք կիրառվում են տեղանքում կողմնորոշվելու, քարտեզների, հատակագծերի և գլոբուսի վրա կորագծերի երկարությունների չափման համար:

Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար Մարիետա Մուրադյանը, դոցենտ Սամվել Կրոյանն ու ամբիոնի ասիստենտ Վարդուհի Հովհաննիսյանն ուսուցիչների համար անցկացրին վարպետության գործնական դաս՝ նորաստեղծ լաբորատորայի ժամանակակից սարքավորումների կիրառմամբ:

Ուսուցիչները նաև հնարավորություն ունեցան աշխատելու կետի աշխարհագրական կոորդինատները և ծովի մակարդակից բարձրությունը գտնելու համար նախատեսված լաբորատորիայի գլոբալ տեղորոշման համակարգով (GPS սարքերով):

Հանդիպման մասնակիցները Մանկավարժական կատարած այցը գնահատեցին արդյունավետ. գործնական մասից բացի, քննարկվեցին աշխարհագրության ուսուցման կազմակերպման գործընթացի հետ կապված մի շարք հարցեր: Ուսուցիչները հույս հայտնեցին, որ նման ձևաչափով հանդիպումները կլինեն շարունակական:

Հիշեցնենք, որ Մանկավարժական համալսարանում գործում է գերազանցության եզակի կենտրոն՝ տեխնիկապես հագեցած լաբորատորիաներով, որոնք միտված են ծառայելու աշակերտական խմբերին և վերապատրաստվող ուսուցիչներին:

Մարին ԱՂԵԿՅԱՆ

Մեր երկրին պետք են լավ դպրոց և լավ ուսուցիչներ

Մանկավարժության ամբիոնի նախաձեռնությամբ կայացավ «Երեխան հարափոփոխ աշխարհում. արհեստական բանականությունը և երեխան» խորագրով քարոզների մրցույթ: Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված ավանդական ձեռնարկն անցկացվում է Մանկավարժության ամբիոնի նախաձեռնությամբ՝ արդեն 12-րդ անգամ:

Ինչպես նկատեց ամբիոնի վարիչ Սիդա Թոփուզյանը՝ օրացույցի կարևորը օրը բուհում նշում են մանկությանը վերաբերող՝ ուսանողների քարոզների և տեսահոլովակների մրցույթի միջոցով:

Պրոֆեսոր Թոփուզյանը նկատեց՝ երեխան սրընթաց փոփոխվող աշխարհում նոր դարաշրջան է բացում կրթության մեջ. սա նոր աշխարհ է իր պահանջներով, օգուտներով, վնասներով, մարտահրավերներով և մտահոգություններով:

Նա այդ համատեքստում հատկապես դժվար համարեց կրթություն իրականացնողների, մասնավորապես՝ ուսուցիչ

պատրաստողների գործը: Ըստ նրա, հարյուրավոր հարցեր են ծագել. ինչպիսի՞ն պետք է լինի այսօրվա ուսուցիչը, ովքե՞ր պետք է իրավունք ունենան աշխատել դպրոցում և ինչպե՞ս վարվել արհեստական բանականության հետ, որ այն դառնա զարգացման գործիք և ոչ նսեմացնող ուժ. «Մենք պետք է նաև հասկանանք, որ արհեստական բանականության առկայությունը մարդկային պատմության մեջ մեծ թռիչք է. մարդկության նոր տիպի անցում ենք ապրում»,- նշեց պրոֆեսորն ու հույս հայտնեց, որ քարոզների մրցույթը կպատասխանի որոշ հարցերի:

«Երեխան պետք է սովորի հարցեր տալ համակարգչին, բայց պատասխաններ փնտրի նաև կյանքում: Նա պետք է ճանաչի արհեստական բանականությունը, բայց երբեք չկորցնի իր սրտի բանականությունը: Մի թող, որ իմ մանկությունը միայն մետաղով ու ալգորիթմով լցվի: Ես ուզում եմ հողով խաղալ, մորս ձեռքը բռնել, ուսուցչից ժպիտ որսալ: Թող արհեստական բանականությունն օգնի ինձ սովորել, բայց դու մարդն ես, որ պիտի սովորեցնես ինձ ապրել»,- այս տարվա քարոզների մրցույթի հաղթող Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի ուսանող Ասյա Օսիպյանի ելույթից հատված է:

Բովանդակության համապատասխանությունը թեմային, մանկավարժական հասկացությունների առկայություն, հուզականություն, լսարանին գրավելու կարողություն. հանձնաժողովը, առաջնորդվելով այս չափանիշներով, ընտրեց հաղթողներին:

2-րդ հորիզոնականը զբաղեցրեց Բանասիրական ֆակուլտետի ուսանող Անա Դավթյանը, որը վստահ է՝ մեր օրերում մանկավարժը պետք է լինի լուռ լապտեր՝ լուսավորի երեխայի ճանապարհը՝ առանց ճնշելու, առանց ուղղորդելու խստությամբ, լինի նրա կողքին՝ որպես ընկեր, վստահելի մարդ, մեծահասակ, որը չի վախենում ճանաչել երեխայի ցավն ու ուրախությունը:

«Եկե՛ք չթողնենք, որ հարափոփոխ աշխարհի խառնաշփոթի մեջ կորցնենք երեխաներին: Եկե՛ք լինենք հենարան, ոչ թե պատ, ուղեցույց, ոչ թե քննադատ, ուժի աղբյուր, ոչ թե՝ վախի մարմնացում: Հաճախ ասենք երեխային, որ սիրում ու հավատում ենք նրան». քարոզի մրցույթում 3-րդ հորիզոնականը զբաղեցրեց Գեղարվեստական կրթության ֆակուլտետի ուսանող Հայկ Համբարձումյանը:

Հաղթողներ եղան նաև «Ունկնդիրների համակրանք», «Ամենահուզիչ քարոզ», «Լավագույն ստեղծագործական լուծում», «Լավագույն մանկավարժական շեշտադրում» անվանակարգերում:

Քարոզներն աչքի ընկան երեխաների՝ մանկության տարիները խաղերով լցնելու, արհեստական բանականության ժամանակներում սրտով, նոր մանկավարժությամբ առաջնորդվելու անհրաժեշտությամբ, որը չի անտեսում տեխնոլոգիան, այլ ներառում է այն, բայց սրտով, հոգով, արագ փոփոխվող աշխարհում սեր աճեցնելով և մտածողությամբ:

ՀՊՄՀ Ուսումնական գործընթացների հարցերով պրոռեկտոր Նաիրա Սաֆարյանը, որ նաև նախագահում էր ժյուրին, նշեց՝ ամեն տարի սիրով և սրտանց է մասնակցում նախաձեռնությանը: Որպես երկարամյա ուսուցիչ՝ ապագա մանկավարժներին խորհուրդ տվեց սիրել երեխաներին, նրանց մասնակից դարձնել իրենց հետ կապված կարևոր հարցերի լուծումներին և չմոռանալ ֆիզիկայի հայտնի ճշմարտությունը՝ փոխադարձության մասին. «Մեր երկրին պետք են լավ ուսուցիչներ. եթե չունենանք ուժեղ դպրոց, չենք ունենա ոչինչ»,-նշեց Նաիրա Սաֆարյանն ու մասնակիցներին հորդորեց մտածել ուսուցչի մասնագիտությամբ շարունակելու և դպրոցն ուժեղացնելու կարևոր առաքելության մասին:

Մարին ԱՂԵԿՅԱՆ

Ամփոփվեցին օլիմպիադայի արդյունքները

Մանկավարժական համալսարանում ամփոփվեցին ավագ դպրոցականների հանրապետական և ՀՊՄՀ-ի բակալավրի ուսանողական օլիմպիադայի արդյունքները:

Ամենամյա ձեռնարկն անցկացվում է Մանկավարժության ամբիոնի նախաձեռնությամբ. ավագ դպրոցականների դեպքում այն նպատակ ունի հեշտացնել մասնագիտական կողմնորոշումը, բարձրացնել ուսուցչի մասնագիտության հանդեպ հետաքրքրությունը, բացահայտել դպրոցականների սպասելիքները 21-րդ դարի ուսուցչից:

Այս տարի «Մանկավարժություն» առարկայից դպրոցականների օլիմպիադային մասնակցել է հանրապետության 50 դպրոցի 9-րդ դասարանցի: Այն անցկացվել է 3 փուլով. առաջին փուլը հաղթահարել է 50 մասնակից՝ լրացնելով դպրոցական մանկավարժության վերաբերյալ 20 հարցից բաղկացած թեստ: Հաջորդ փուլ անցածները գրել են «Բուլինգը դպրոցում» թեմայով էսսե, իսկ երրորդ փուլը հաղթահարած 21 աշակերտ ներկայացրել «21-րդ դարի ուսուցիչը իմ պատկերացմամբ» թեմայով աշխատանք:

Հիմնախնդրի էություն և արդիականություն, տեսակետի հիմնավորում, լսարանը զգալու, գրավելու, դատողություններ, հռետորական կարողություններ, խոսքի մշակույթ. այս չափանիշները հաշվի առնելով օլիմպիադայի կազմկոմիտեն, որ ղեկավարում էր Մանկավարժության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Սիդա Թոփուզյանը, ընտրեց 3 հաղթողի:

«Ժամանակակից կրթության պահանջները փոխվում են տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը զուգընթաց: Այսօրվա ուսուցիչը ոչ միայն գիտելիք է փոխանցում, այլև առաջնորդում է աշակերտներին: 21-րդ դարի ուսուցչի կարևորագույն խնդիրն է սովորեցնել աշակերտներին՝ ինչպես արագ սովորել»,- իր ելույթում նշեց Երևանի թիվ 104 հիմնական դպրոցի 9-րդ դասարանի աշակերտ Արեգ Յավրյանը, որն զբաղեցրեց 1-ին տեղը: Նրա կարծիքով, ուսուցիչը պետք է լինի համբերատար, հոգատար, համագործակցի աշակերտի հետ, արագ հարմարվի նոր տեխնոլոգիաներին, պատրաստի ապագայի առաջնորդներ:

Հաղթողներ եղան նաև «Հանպատրաստից ելույթ», «Մտորման կոչ», «Ինքնատիպ ելույթ» անվանակարգերում:

ՀՊՄՀ Մանկավարժության ամբիոնի վարիչ Սիդա Թոփուզյանը բարձր գնահատեց աշակերտների կատարած աշխատանքն ու ընդգծեց այն հանգամանքը, որ օլիմպիադայի կրտսեր մասնակիցները ուսուցչի մեջ կարևորում են սիրտն ու հոգին, այն, ինչ ներդրվում է ուսումնական գործընթացում:

Ձեռնարկի ընթացքում հայտնի դարձան նաև ՀՊՄՀ բակալավրի ուսանողական օլիմպիադայի արդյունքները: Նախաձեռնությունը նպատակ ուներ խորացնել ուսանողների մանկավարժական գիտելիքները, ամրապնդել պրակտիկ գործունեություն ծավալելու կարողություններն ու հմտությունները, ձևավորել մանկավարժական մտածելակերպ:

Եռափուլ օլիմպիադայի առաջին փուլի մասնակիցները լրացրել էին մանկավարժության պատմության վերաբերյալ 20 հարցից բաղկացած թեստ: Երկրորդ փուլ անցած 29 ուսանող ներկայացրել մանկավարժական իրավիճակներ, տվել դրանց լուծման առնվազն երկու տարբերակ, հիմնավորել տեսակետը: Այս փուլը հաղթահարած 12 մասնակից 3-րդ փուլում ներկայացրեց անհատական և խմբային նախագիծ՝ նվիրված մանկության ժամանակակից հիմնախնդիրներին:

Օլիմպիադայի հաղթողը Սկզբնական կրթության ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող Անահիտ Խուդավերդյանն էր: Վերջինս անդրադարձավ երեխայի կյանքում խաղի դերի նվազմանը: Նրա դիտարկմամբ՝ ժամանակակից կրթական համակարգը պետք է վերագնահատի խաղի դերը և ստեղծի հավասարակշռություն տեխնոլոգիական առաջընթացի և երեխաների բնական զարգացման կարիքների միջև:

Հաղթողներ եղան նաև «Հումանիստական», «Մեդիա», «Ինքնատիպ» նախագիծ անվանակարգերում:

Օլիմպիադայի մասնակիցները ստացան մասնակցության հավաստագրեր, իսկ հաղթողները՝ նվերներ և դիպլոմներ:

ՀՊՄՀ Ուսումնական գործընթացների հարցերով պրոռեկտոր Նաիրա Սաֆարյանը շնորհակալություն հայտնեց ակտիվ մասնակցության և նախագծում դպրոցականների ակտիվ ներգրավման համար: Պրոռեկտորը կարծում է, որ պետք է հաղթահարել ներկայիս մարտահրավերներն ու դառնալ նոր մոդելի ուսուցիչ, այնպիսին, ինչպիսին ցանկանում է տեսնել 21-րդ դարի աշակերտը:

Օլիմպիադայի աշխատանքները համակարգող, ամբիոնի դոցենտ Նաիրա Մարտիրոսյանն օլիմպիադայի անցկացումը ինքնանպատակ չի համարում. կարևորում է, որ 12 տարվա պատմություն ունեցող ձեռնարկն անցել է զարգացման փուլեր՝ ընդլայնելով մասնակցության մասշտաբներն ու վերագնահատելով նպատակի կարևորությունը:

Մարին ԱՂԵԿՅԱՆ

Նորաչևության միտումները Մանկավարժականում

➢1 Շքերթ-երեկոն հիացմունքի բազմաթիվ պահեր պարգևեց ներկաներին՝ «Նախաճաշ Տիֆոնիի մոտ», «Ավտոշքերթ», «Վեներայի ծնունդ», «Գառնի», «Գեղարդ», «Կասկադ», «Լուսնթագի փայլը», «Կլեոպատրա թագուհի», «Փառանձեմ թագուհի», «Հոգու լույս», «Կյանք ու կռիվ», «Ախթամար», «Հայի աչքեր», «Էլեգիա»... Արաբական, հունական, չինական մշակույթի ու նորաձևության միտումներից մինչև հայկական նորաձևություն, մինչև փարաջանովյան երանգներ: Հատկապես հուզիչ էր Արցախը ներկայացնող հավաքածուն մուգ վարդագույնի և սևի համադրությամբ...

Ճարտարապետական, գեղագիտական լուծումներ, գույների ու ոճերի գեղեցիկ համադրություն:

Ուսանողներից յուրաքանչյուրի ոգեշնչման աղբյուրը տարբեր էր, տարբեր էին ստեղծագործական մոտեցումներն ու հղացումները: Պետք է ընդգծել նաև մոդելների ներկայացմանը համահունչ երաժշտական հրաշալի ձևավորումը:

ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը շնորհավորեց շրջանավարտ ուսանողներին՝ գնահատելով ոչ միայն ընտրված թեմաներով ցուցադրությունը, այլև տվյալ արվեստի ոլորտում ցուցաբերած որակներն ու գործնական արդյունքները:

«Հուսանք, որ հետագայում մեր շրջանավարտներից շատերի անունները կփայլեն համաշխարհային նորաձևության ոլորտում՝ փառք և պատիվ բերելով Հայաստանին և Մանկավարժական համալսարանին»,-ասաց ռեկտորը:

Նախաճեռնությունը բարձր գնահատեց և գովասանքի խոսքեր ասաց ոլորտի ճանաչված մասնագետներից Կարինե Դնոյանը: Նա հատկապես գնահատեց ցուցադրության հետ կապված նախապատրաստական աշխատանքները: «Երաժշտությունն էլ շատ տպավորիչ էր ու համապատասխան: Իրականում մեկ նկատառում պետք է հաշվի առնվեր՝ ինչ նյութ, ինչ ոգեշնչման աղբյուր էլ վերցրել էին, բոլորն աշխատել են երեկոյան զգեստների վերածել: Լուրջ թեմաներ էին վերցրել, բայց վերածել երեկոյան կորսետներով զգեստների, կարելի էր ավելի հետաքրքիր ձևերի մեջ զգեստներ ներկայացնել: Որպես մասնագետ՝ վաղը ես ավելի մեծ ուշադրություն եմ դարձնելու նյութի որակին, կարին, կոնստրուկցիաներին և այլն: Բայց ցուցադրությունը վիզուալ շատ հետաքրքիր էր»,-ասաց Կարինե Դնոյանը:

Մասնագիտական հանձնաժողովը ամբողջ ընթացքում հետևում էր ցուցադրությանը և անաչառ գնահատականներ կտա յուրաքանչյուր աշխատանքին:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

«Հիշում եմ և պահանջում»

Ծնվել եմ, որ քո ափերով չափեմ խաղաղ ջրերի զառանցանքները,
Չարակամներին անդունդը թափեմ ջնջելով հետքերն ու հանցանքները...
Ծնվել եմ, որ քո զույգ ափի միջից արեգակներով սնվեմ, զորանամ,
Արցունքս քամեմ մարդկության խղճից...

Հովհաննես Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնի բեմում ՀՊՄՀ պրոֆեսոր Սիդա Հովհաննիսյանի բեմադրած հերթական ներկայացումն է՝ «Հիշում եմ և պահանջում» խորագրով, ռեժիսուրական հետաքրքիր լուծումներով՝ հենված պոետ Անահիտ Վարդանանցի և ճանաչված հայ և ռուս պոետների բանաստեղծությունների վրա: Թեման հայ ժողովրդի հավերժական ցավի մխացող մորմոքն է: Հայոց մեծ եղեռնի ահասարսուռ ցավն է արձագանքում բեմի վրա, մշուշում մեր պատմության անցյալը, իսկ երեք սերնդի ներկայացուցիչներն ապրում են այդ ցավը և ապրեցնում հանդիսատեսին՝ հույսին, հավատին, ապագային հառած աչքերով:

Ներկայացման գլխավոր դերը երիտասարդ Գոռ Վարդանանցը պատվով ու արժանապատվությամբ է մարմնավորում, նրա ձայնը ազդեցիկ է, խաղը՝ պոետիկ, զգացմունքային, բայց և վճռական. նա «տեսնում է մարդկանց մշուշոտ աչքերն ու սառը հոգին և դիմակները», ապա փաստում՝ «օրերը գալիս անցնում են մեկ-մեկ ու հետքն են թողնում աշխարհի վրա»... Կյանքի փիլիսոփայությամբ ընդգծված պատկերները հաջորդում են իրար, խոսում են չարի ու բարու, մարդկային ստորության ու կեղծիքի, դաժանության ու ոճիրների, մարդկային դավաճանության, սիրո առեղծվածի ու կյանքի անցողիկության մասին:

Ծանր բացվում է վարագույրը՝ սև-կարմիր երանգներով ու հատու ռիթմերով աղաղակում մարդկային մեծ սպանդի մասին, ոճիր, որին անտարբեր նայեց աշխարհը, ոճիր, որ երբևէ չի կարող մոռացվել՝ որպես խարան 20-րդ դարի ճակատին, որպես մարդկության ամոթ...

Կյանքը սկսվում ու ավարտվում, շարունակվում է մանկան ճիչով, ու սերունդների երթը հարատև է, բայց այդ երթին մշտապես ուղեկցում են սառնասիրտ ոճիրներ, և մարդկային ցավն անզոր է կասեցնել չարի ընթացքը, անգամ Աստծո ձեռքը չի կարող կանխել արյան ծովերը, շեղել նրանց ընթացքը դեպի խաղաղություն. «Միշտ քարկոծում են և ինչ դժվար է ողջ մնալ կյանքում»,- կերկերուն ձայնով արտաբերում է գլխավոր հերոսը: Մինչդեռ Արարատ լեռը կանչում է դեպի իր գագաթը, ուր կյանք ու լույս կա, ուր անթեղված են հայ մարդու երազանքները:

«Աստված, որ ներում է մինչև անգամ հետքը մեղսության՝ խաչեց մեր սերը»... Այո, «վախճանի հորանջով մեռնում են սերերը», ասել է թե՝ մեռնում է կյանքը, խաչվում են մարդկային մարմինները տառապանքի սրով ու ամենուր կարծես դանթեական դժոխք է, մահվան ոճիր ու խրախճանք: Արարատն է միայն, որ իր սև-սպիտակի մեջ խորհրդանշում է մեր անցյալն ու գալիքը, պարգևում հույսի շող...

Ներկայացման խորհրդանիշներն ու ասելիքը միահյուսվում են, ուղերձներ սփռում շուջբոլորը՝ ո՛չ մարդկային եղեռնին, ո՛չ ցեղասպանությանը...

Երեք սերունդ բեմի վրա՝ մարդկության հարատև ընթացք չարի ու բարու հարափափոխ երթում, երեք սերունդ՝ «սպասման հիվանդ», մութ ու լույսի խաղ ու անվերջ, անհատնում տառապանք... Դահլիճի լռությունը արձագանքն է խաղացողների. բեմի վրա բոլորը փայլում են, անկեղծություն կա յուրաքանչյուրի մարմնավորած կերպարում. նրանք շուրջ երկու ժամ իրենց ուսերին կրում են 110-ամյա եղեռնի ծանրությունը և փորձում կանխորոշել մեր ապագան՝ դժվար առաքելություն, բայց և օդի ու ջրի պես անհրաժեշտ... Քանզի կյանքի հիմքում սերն է՝

Եվ ամեն ինչում սերն է
դու աղոթքի պես ապրիր
իմ հոգում...

Բայց երբ այդ սերը մորթվում է՝ «հեռանում ենք աշխարհից, դառնում լույս...»:

Ներկայացման ծանր ու ճնշող մահվան ու սպանդի տեսարանները աղաղակում են՝ թշնամին վախկոտ է, լիրբ, միայն մայրն է սուրբ սրբոց, «երանի նա լինի տուն Հայոց»:

Սեր, ժպիտ, պոեզիա... ու նորից՝ մահվան սպանդ՝ չարի հորձանուտում, որ «ատելության թույնը բերանին՝ քրքիջ է թքում մարդկության դեմքին», մնում է հուսալ, որ «երբ էլ լինի՝ կհանդիպեցնի կյանքը բոլորին»:

Մի՛ կոտորեք. բեմի վրա սև սպանդ է, կոտորած, մարդկանց խելագարված ծիծաղ ու քրքիջ, խաչված Հիսուսի տեսիլք՝ համադրված ժողովրդական ու դասական երաժշտության նուրբ ելևէջներով: Եվ եղեռնի ու գաղթի տեսարաններ էկրանին ու բեմի վրա, նաև 21-րդ դարի պատերազմ ու Արցախ աշխարհի մերօրյա բռնագաղթ... Պատմությունը կրկնվում է, Անին, Կարսը, Վանը, էրզրումը դեռ կանչում են... Թվում է՝ հույսը չի մեռնում, իսկ ամփոփիչ ուղերձները հորդորում են՝

Հայոց հողը սրով պահենք,
Շատանանք ու հզորանանք,
Դառնանք դեպի Հայոց ոստան...
Վերածնված մայր Հայաստան:

Մարդկային ծանր ապրումներից հյուսված այս բեմադրությունը՝ Մանկավարժական համալսարանի ռեժիսուրայի բաժնի ուսանողների թատերախմբի մատուցմամբ, Սիդա Հովհաննիսյանի հերթական նվերն էր հանդիսատեսին, որ ընդունվեց սիրով ու ծափերով: Սա ռեժիսորի և ողջ հայ ազգի լավատեսության անդրադարձն էր՝ գալու է այն օրը, երբ հայ մարդը սրբելու է արցունքները և վերածնված հայրենիքի մեջ կառուցելու է իր երջանիկ ապագան:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Մշակութային զարկերակ

Մանկավարժական համալսարանի Ուսանողական խորհուրդը մայիսի 27-ին հանդես եկավ նոր նախաձեռնությամբ. «Մշակութային զարկերակ» միջոցառումը ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետում իր շուրջն էր համախմբել տարբեր ֆակուլտետների ուսանողների: Բեմը հաջորդաբար տրամադրվում էր ֆակուլտետների ուսանողներին, որոնք ըստ իրենց մասնագիտական ուղղվածության երգ, պար, ասմունք էին ներկայացնում, բեմադրում մասնագիտությանը վերաբերող սցենարներ՝ դրանք համեմելով ուսանողական առօրյան ամփոփող տեսահոլովակներով:

Ծրագիրը մեկնարկեց Երևանի Գայի անվան N 129 հիմնական դպրոցի սովորողների նկարչական աշխատանքների ցուցադրությամբ:

«Սա պարզապես միջոցառում չէ, սա մշակույթն է շարժման մեջ՝ խոսքը ապրումի, հույզը արվեստի,-միջոցառումն այս խոսքերով բացեց հանդիսավարը՝ լրագրության բաժնի ուսանող Սիմոն Հովհաննիսյանը, և շարունակեց,-սրանք մեր հոգու և սրտի զարկերն են, որ միաձուլվում են մեկ բեմի վրա՝ վերածվելով անմոռանալի մշակութային պահերի»:

Ուսանողների նախաձեռնությունը ողջունեց ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը՝ ընդգծելով միջֆակուլտետային մշակութային փոխներգործության կարևորությունը. «Մշակույթը կոլեկտիվ իրականության դրսևորման այնպիսի արտացոլման հնարավորություն է, որտեղ յուրաքանչյուրի հոգեբանական անհատականության գծերի յուրատիպ դրսևորումը, ճաշակը, ներանձնային ուղղվածությունը, արժեհամակարգը էլ ավելի հստակ բացվում, ուրվագծվում է և միմյանց ճանաչելու հնարավորություն է ստեղծում»:

Նախ հրապարակեցին 10 ֆակուլտետների «ՀՊՄՀ-ն մենք ենք» տեսահոլովակների ու նկարների մրցույթում հաղթած ֆակուլտետների անունները, այնուհետև ելույթ ունեցան ուսանողները, որոնք առանձին-առանձին ներկայացրին ոչ միայն իրենց ֆակուլտետները, այլև «իրենց աշխարհայացքը, արժեքները և սիրո խոստովանությունն առ մշակույթ»:

Ուսանողները օրը լցրին մշակութային գեղեցիկ կատարումներով՝ բացահայտելով յուրաքանչյուր ուսանողի մշակութային ներուժն ու բեմի վրա դրսևորվելու հնարավորությունն ու համարձակությունը:

Միլվա ԱՍՐՅԱՆ

Լռեցնելով լրագրողին՝ հարվածում եք հասարակությանը

Ժողովրդավարական հասարակություններում խոսքի ազատությունը հիմնարար արժեք է: Սակայն, երբ այդ ազատությունը չի պաշտպանվում, լրագրողներն առաջինն են վտանգի տակ հայտնվում: Ճշմարտության փնտրտուքի ճանապարհին նրանք հաճախ են ենթարկվում բռնության և ճնշման:

Լրագրողները պարբերաբար ենթարկվում են հարձակումների՝ հատկապես քաղաքական ճգնաժամերի ժամանակ, ընդ որում, ընդդիմադիր ուժերի կազմակերպած ցույցերի ընթացքում լրագրողներ տուժում են թե՛ իրավապահներից, թե՛ քաղաքացիական հագուստով անձանցից, թե «իշխանամետ» լրագրողներ, թե «ընդդիմադիր»:

Լրագրողներին հաճախ սպառնում են դատական հայցերով, վիրավորանքներով և վարկաբեկումներով՝ մասնավորապես սոցիալական մեդիայի հարթակներում: Օրինակ՝ օրվա իշխանությանը քննադատող լրագրողների դեմ հաճախ տարածվում են կեղծ տեղեկություններ, արշավներ՝ նրանց անվանարկելու նպատակով:

Անկախ լրատվամիջոցներն ու լրագրողները բախվում են նաև ֆինանսավորման խնդիրների: Երբեմն խոշոր բիզնեսներն ու իշխանությունները սահմանափակում են գովազդային հոսքերը՝ ստիպելով խմբագրություններին զիջումների գնալ: Մասնավորապես, 1998-2002 թվականների ժամանակահատվածում գործարարներին արգելվել էր Ա1+ հեռուստաընկերությանը գովազդ պատվիրել. ասել է թե՝ հեռուստաընկերությունը ենթարկվում էր տնտեսական ճնշման, քանի որ ԶԼՄ-ների հիմնական եկամտի, հետևաբար գոյատևման աղբյուրը հենց գովազդներն են:

Հայաստանի սահմանադրությունը երաշխավորում է խոսքի ազատությունը, սակայն գործնականում դատական համակարգը միշտ չէ, որ պաշտպանում է լրագրողների շահերը: Լրագրողի նկատմամբ բռնություն գործադրելը ոչ միայն մարդու իրավունքների լոկալ խախտում է, այլև վնաս է հասցնում ամբողջ հասարակությանն ու ժողովրդավարական զարգացումներին: Երբ տեղեկատվության աղբյուրները լռեցվում են, հանրությունը զրկվում է իր՝ տեղեկացված լինելու իրավունքից:

Տատիկի պահածոները

Տատիկի ձեռքերով փակված պահածոները պարզապես սնունդ չեն: Դրանք հիշողության, սիրո, հոգատարության կրողներ են: Բայց միայն այդպե՞ս ենք ուզում հիշել կնոջ կերպարը՝ խոհանոցում, պահածոյի շուրջ: Այսօր, երբ տատիկի մուրաբան փոխարինվում է սուպերմարկետի արտադրանքով, փոխվում է նաև կնոջ դերակատարությունը՝ ընտանիքում, հասարակության մեջ և պատմության մեջ: Երբ խոսում ենք տատիկի մուրաբայից կամ պահածոյից, վերապրում ենք ջերմություն: Բայց երբ այդ հիշողությունը կապում ենք բացառապես կնոջ հետ, ռոմանտիկ հիշողությունը հեշտորեն դառնում է նուրբ պարտադրանք:

«Էդ մուրաբան, որ տատիդ պես չես սարքում, էլ ի՞նչ կին ես»՝ սա է ենթատեքստը, որ կարող է թաքնված լինել նույնիսկ ամենաբարեհամբույր պատմության մեջ: Այսօր կանայք ունեն ազատություն՝ ընտրելու մուրաբան փակել, թե՞ ոչ: Պատրաստելու ցանկությունն այլևս չի բխում պարտականությունից:

Նոր սերունդը՝ լինի կին, թե տղամարդ, կարող է փորձել վերականգնել պահածոյի մշակույթը՝ որպես ընտանեկան կապ, ոչ թե կնոջ պարտականություն: Ո՞վ է ասել, որ մուրաբան պիտի կինը պատրաստի: Երբ տղամարդիկ խոհանոց են մտնում, չեն «խախտում» ավանդույթը, այլ ընդլայնում են այն: Մեր տատիկների վարպետությունը ոչ թե կանացի էր, այլ մարդկային: Հիշողությունը սեռ չունի: Իսկ պահածոն ամենից առաջ ընտանեկան ժառանգություն է: Հարմարությունն ինքնին մեղավոր չէ: Բայց եթե հարմարությունն ամբողջությամբ փոխարինում է պատմությունը, կորցնում ենք արժեքը: Խնդիրը ոչ թե թթու վարունգի ծագումն է, այլ՝ ընտանեկան կապերի վերածնունդը: Կարող ենք գնել, բայց նաև հիշել ու արժևորել: Կարող ենք չփակել, բայց չմոռանալ: Տատիկի պահածոյի համը կարևոր է, բայց ոչ ավելի, քան կնոջ ձայնն ու ընտրության իրավունքը: Եթե մի օր այդ մուրաբան փակեն որդիներն իրենց երեխաների համար, այդ ժամանակ կիմանանք՝ մենք ոչ թե կորցրել ենք մի բան, այլ՝ հարստացել:

Գայանե ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
ՀՊՄՀ լրագրության բաժնի 2-րդ կուրսի ուսանող

Հայացք ֆորմալ և ոչ ֆորմալ կրթությանը

21-րդ դարում կրթությունն այլևս չի սահմանափակվում դասախոսով, գրքով կամ տետրով: Այն վերածվել է բազմաշերտ համակարգի, որտեղ կարող ես սովորել ինչպես ուսումնական հաստատությունում, այնպես էլ հաստատությունից դուրս՝ համացանցում:

Ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության մասին զրուցել ենք տարբեր բուհերի ուսանողների հետ, որպեսզի հասկանանք նրանց կարծիքը այս երկու համակարգերի վերաբերյալ:

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Բանասիրական ֆակուլտետի ուսանողուհի Էլեն Վիրաբյանը բուհի կրթական համակարգի վերաբերյալ ասաց. «Համալսարանում ստացած կրթությունս համարում եմ լիարժեք, քանի որ գիտելիքներ ենք ստանում ոչ միայն մասնագիտական առարկաներից, այլև ոչ մասնագիտականներից: Կրթական ձևերից, բնականաբար, ընտրում եմ համալսարանը, քանի որ այստեղ պիտի կրթվեմ, որպեսզի դառնամ հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի-մանկավարժ, և չեմ կարծում, թե կարող է լինել այնպիսի դասընթաց, որը կարող է փոխարինել համալսարանի կրթությանը»:

Հարցին, թե որպես ուսանող և ապագա մանկավարժ ինչպե՞ս է վերաբերվում ֆորմալ և ոչ ֆորմալ կրթությանը, էլենը պատասխանեց. «Կարևորում եմ և՛ ֆորմալ, և՛ ոչ ֆորմալ կրթությունը: Հիմա ժամանակները փոխվել են, և 21-րդ դարի ուսանողին չի հետաքրքրում պարզապես դասախոսություն լսելը, պետք են ոչ ֆորմալ միջոցներ, որպեսզի և՛ դասը հետաքրքիր լինի, և՛ զարգանա աշակերտի կամ ուսանողի սովորելու մոտիվացիան»:

Ի տարբերություն Էլենի՝ ՀԱՊՀ նախկին ուսանողներից մեկը համալսարանի կրթությունից այնքան էլ գոհ չէր, նա խոսեց իր փորձի մասին և ներկայացրեց բուհի կրթական համակարգը. «Պոլիտեխնիկում սովորել եմ առաջին կուրսի մեկ կիսամյակ: Որոշել եմ փոխել համալսարանը, որովհետև այստեղ ստացած կրթությունն ու պահանջները այնքան էլ չեն համապատասխանում իրար: Ներկա պահին մասնակցում եմ օնլայն դասընթացների, արդյունավետ է, ես հակված եմ ավելի շատ ոչ ֆորմալ կրթությանը»:

Ինչու՞ են ուսանողները խուսափում դիմել համալսարաններ՝ կարծում եմ դիմորդների պակասը համալսարաններում հիմնականում պայմանավորված է ուսման վարձով, հնարավոր դիմորդների անվճարունակությամբ: Համալսարանների ուսման վարձերը բավականին բարձր են, և շատերը դուրս են գալիս բարձր վարձի, երբեմն էլ ոչ լիարժեք կրթության պատճառով:

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի ուսանողուհի Մարիկա Գալստյանը ևս նշեց ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության կարևորության մասին. «Ինձ համար երկու մեթոդն էլ հավասարաչափ կարևոր են, բայց իմ կարծիքով ոչ ֆորմալ կրթության տարբերակը հասանելի է շատերին՝ և՛ անվճար, և՛ վճարովի տարբերակով, իսկ ֆորմալ կրթության տարբերակում, օրինակ համալսարաններում, վարձավճարները երբեմն այնքան բարձր են լինում, որ շատերն ի վիճակի չեն լինում այդքան վճարել, որ ստանան համալսարանական կրթություն, այդ պատճառով նախընտրում են մասնակցել 3 ամիս տևողությամբ դասընթացի, քան 4 տարի սովորել համալսարանում»:

«Ո՞ր կրթական մեթոդն եք առավել արդյունավետ համարում» հարցին Մարիկան պատասխանեց. «Դպրոցներում հիմա նախագծային աշխատանքներ են իրականացվում, ու այդպես են աշակերտները գնահատվում: Ես ինքս էլ մի քանի նախագծային աշխատանքների եմ ներկա գտնվել ու կասեմ, որ ուսումնական մեթոդի այդ տարբերակը արդյունավետ է ու երեխաների համար հաճելի, որովհետև ավելի պատկերավոր են իրենք տեսնում այն ամենը, ինչ սովորում են»:

Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ուսանողուհի Սառա Հարությունյանն էլ համալսարանում ստացած կրթությունը գնահատեց բավարար. «Մասնավոր դպրոցներում չեմ սովորում և չեմ մասնակցում հավելյալ դասընթացների, համալսարանի դասախոսների մեծամասնությունը կրթված է և տրամադրում է բավարար գիտելիքներ: Բուհում ստացած կրթությունը գնահատում եմ բավարար, բայց կարծում եմ՝ ավելի լավ կարող էր լինել»:

Ուսանողների կարծիքները և տեսակետները տարբեր են: Կարծում եմ՝ պարզապես պետք է ընդունել, որ պետական և մասնավոր, ֆորմալ և ոչ ֆորմալ կրթությունը պետք է դիտարկվի որպես իրար փոխլրացնող, այլ ոչ թե հակադրվող համակարգեր:

Լիանա ՊԵՏՐՈՍՅԱՆ
Կուլտուրայի ֆակուլտետի լրագրության բաժնի ուսանող

Մենք կորցրել ենք մեր հայրենիքը, բայց ոչ երբեք սերը հայրենիքի հանդեպ

Հողը մի կենդանի էակ է, և առանց հայրենիքի,
առանց հարազատ հողի հետ սերտ կապի,
մարդ չի կարող գտնել իրեն, իր հոգին:

Մեր հայրենիքը դարերի անմահ պատմություն է՝ լցված պատերազմներով, հայրենի հողի հանդեպ սիրով: Հայրենիք ունենալու համար պետք է ունենալ դարերի պատմություն, Մոնթեի նման առաջնորդ, Վարդանի նման սպարապետ, Դավթի նման հերոս, Մաշտոցի նման ուսուցիչ: Մերօրյա հասարակության պայմաններում, երբ գլոբալիզացիան, տեխնոլոգիական առաջընթացը և սոցիալական փոփոխությունները հաճախ կարող են վտանգել ազգային ինքնության, ավանդույթների և հայրենիքի հանդեպ պատկանելության զգացումը, ազդելով անձի դաստիարակության վրա, առավել կարևոր է դառնում ազգային արժեքների պահպանումը և փոխանցումը նոր սերունդներին: Այս պայմաններում մեծ պատասխանատվություն է ընկնում թե՛ ընտանիքի, թե՛ կրթական համակարգի վրա ձևավորելու գիտակից և արմատներին կապված անհատներ:

Իսկ որտեղի՞ց է սկսվում հայրենիքը:

Ցանկացած մարդու համար իր հայրենիքը սկսվում է իր տնից, իր բակից, իր այգուց: Հայրենիքը սկսվում է իր երկրի մի թիզ հողից, մի կում ջրից, մի հանդամասից, մի կտոր երկնքից: Եվ ամենակարևորը՝ իր մայրենի լեզվից: Եթե այս ամենը մարդը չի հասկանում, ապա «հայրենիք» հասկացությունը նրա համար կդառնա մի ինչ-որ անորոշ բան:

Դպրոցը, ուսուցիչները, ծնողները պարտավոր են ձևավորել երեխաների հայրենասիրական զգացմունքները: Պարտավոր են նրանց մեջ սերմանել հոգատար վերաբերմունք հայրենիքի պատմության, մշակույթի, հայրենիքում ապրող հարազատ ժողովրդի, ազգի ավանդույթների, սովորույթների նկատմամբ:

Մեր սերունդների հայրենասիրական զգացմունքների ձևավորման գործում կարևոր դեր կարող են խաղալ մեր պետության խորհրդանշանները՝ գերբը, դրոշը, օրհներգը, զինանշանը, դրանց պատմության ուսումնասիրությունը:

Հայրենասիրական դաստիարակության բովանդակությունը ներառում է բազմակողմանի ուսուցողական և դաստիարակչական միջոցառումներ, որոնց նպատակն է խթանել ազգային ինքնագիտակցությունը և ամրապնդել երիտասարդների հայրենասիրական արժեքները: Այս բովանդակության շրջանակներում պետք է ընդգրկել հայրենական պատմության և մշակույթի ուսումնասիրությունը, որտեղ ուշադրություն է դարձվում նշանավոր անձանց, պատմական իրադարձություններին, ինչպես նաև ազգային ժառանգությանը, ինչը նպաստում է երիտասարդ սերնդի կողմից իրենց արմատների և անցյալի գիտակցմանը: Բաղադրիչ մաս պետք է կազմի ազգային արժեքների և ավանդույթների փոխանցումը, ծանոթացումը սովորույթներին, տոնական արարողություններին, մշակութային արտահայտման ձևերին, որոնք նպաստում են ազգային ինքնության ձևավորմանը: Դաստիարակության կարևոր ուղղություններից է նաև հայրենասիրական վերաբերմունքի ձևավորումը, որը ներառում է երիտասարդների պատրաստումը որպես ակտիվ և պատասխանատու քաղաքացիներ, որոնք գիտակցում են իրենց դերը պետության և հասարակության կյանքում, գնահատում ու պաշտպանում են հայրենիքը:

Հայրենասիրությունը՝ բնույթով որպես սոցիալական երևույթ, հասարակության գոյության և զարգացման հզոր աղբյուր է, հանդես է գալիս որպես մարդու կենսունակության, իսկ երբեմն էլ նրա կենսակայունության բնութագրիչ: Հայրենասիրությունը լոկ սրտի բաբախ չէ. այն ոգու կանչ է, լույսի պես անշոշափելի, սակայն այնքա՜ն իրական, ինչպես արեգակի շողը՝ ցրտաշունչ օրերին: Այն ապրում է ամեն հայի մեջ՝ լուռ, բայց հպարտ, պարզ, բայց հզոր: Այն մեր հողից է ծնվում, մեր մայրենի լեզվից է սնվում, մեր նախնիների պատմությունից՝ զորանում: Հայրենիքի կորուստը ցավ է, որ խորությամբ ու տևողությամբ չի զիջում ամենածանր վերքերին: Այն կորուստ չէ միայն հողերի կամ շենքերի, այլ հիշողությունների, մանկության, արմատների: Ես՝ որպես արցախցի, այդ ամենը վերապրել եմ իմ ներսում: Ես տեսել եմ, թե ինչպես է մանկությանս տունը մնում սառը պատերի հիշողություն: Այդ ցավը ոչ միայն իմն է, այլ հազարավորներինը, որոնք կորցրել են իրենց հայրենիքը, բայց ոչ երբեք սերը հայրենիքի հանդեպ:

Եկե՛ք սովորեցնենք սիրել Հայաստանը, չսպասելով դժվարությունների, սովորեցնենք սիրել նրան ամեն օր՝ իր արևածագով ու արևամուտով, իր վշտով ու հույսով: Չէ՞ որ նա է հայի ընտանիքը, մեր մոր նման՝ երբեմն լուռ, բայց միշտ ներկա: Թող մեր սրտերը լինեն հողի նման համբերող, բայց պտղաբեր, իսկ մեր գործերը՝ քարի նման ամուր, բայց անկոտրում: Այդժամ կզգանք՝ հայրենասիրությունը ոչ թե պարտականություն է, այլ՝ կոչում: Սուրբ կոչում:

Հայրենասիրական դաստիարակությունը ձևավորում է ուժեղ և միավորված հասարակություն, որտեղ յուրաքանչյուր քաղաքացի գիտակցում է իր դերը հայրենիքի պաշտպանության, զարգացման ու ազգային ինքնության պահպանման գործում: Հետևաբար հայրենասիրական դաստիարակությունը պետք է լինի շարունակական, ընդգրկելով կրթական համակարգը, ընտանիքը և ողջ հասարակությունը՝ ապահովելու երկրի ապագայի կայունությունն ու անվտանգությունը:

Արիանա ՍՏԵՓԱՆՅԱՆ
Օտար լեզուների ֆակուլտետի անգլերեն լեզու և գրականություն բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի

Պրակտիկայի ամփոփում՝ դիդակտիկ նյութերի ցուցահանդեսով

ՀՊՄՀ Մանկավարժության ամբիոնի նախաձեռնությամբ կայացավ մանկավարժական պրակտիկայի դիդակտիկ նյութերի ցուցահանդեսը:

Դիդակտիկ նյութեր, բազմաբնույթ պաստառներ, խաղեր, տառադարաններ, բառագրքեր, քարտեր և հետաքրքիր այլ պարագաներ. ուսանողներն ընդգծեցին պրակտիկայի կարևորությունը՝ տեսական գիտելիքները գործնականում կիրառելու, դիդակտիկ պարագաների և խաղերի կիրառման ընկալման, հաղորդակցական, համագործակցային, գործնական կարողությունների զարգացման, ուսուցման նկատմամբ հետաքրքրության, ուսումնական մոտիվացիայի բարձրացման առումով և այլն:

Ցուցահանդեսի նորարարությունն այն էր, որ բուհի 6 ֆակուլտետի առկա և հեռակա ուսուցման համակարգում սովորող 2-3-րդ կուրսերի ուսանողները ներկայացրին և վերլուծեցին նաև ուսումնաճանաչողական և

մանկավարժական պրակտիկաների ընթացքում կազմակերպած բազմաբնույթ արտադասարանական և արտադպրոցական միջոցառումները:

Երեխաների խմբային համագործակցության, երևակայության, անհրաժեշտ պահին իրար օգնելու և աջակցելու կարողությունների զարգացում, խաղային-տրամաբանական գործողությունների միջոցով մտածողության, այցերի միջոցով՝ մշակութային և տեխնոլոգիական գրագիտության, սովորողի հետաքրքրության և նախաձեռնողականության զարգացում, ինքնարտահայտվելու հնարավորություն, մասնակցայնություն, նախաձեռնողականություն և այլն. ապագա մանկավարժները ներկայացրին պրակտիկայի նպատակները, անդրադարձան դժվարություններին և ամփոփեցին վերջնարդյունքներով:

Ցուցահանդեսին ներկա էր նաև բուհի ղեկավար և դասախոսական կազմը, որոնք իրենց դիտարկումները ներկայացրին գործընթացի վերաբերյալ:

Մանկավարժության ամբիոնի դոցենտ Գայանե Հարությունյանը, որը ղեկավարել է պրակտիկայի աշխատանքները, նկատեց՝ կազմակերպված միջոցառումները, ստեղծված նյութերն ունեն կրթական, դաստիարակչական և զարգացնող նշանակություն: Դրանք նպաստում են ուսանողների մասնագիտական կարողությունների, գիտելիքների և ստեղծագործականության զարգացմանը:

Նշենք, որ ցուցահանդեսի ընթացքում հավաստագրեր հանձնվեցին արտադասարանական միջոցառումների իրականացման գործում նորարարական, քննական-վերլուծական և ստեղծագործական մոտեցում ցուցաբերելու անվանակարգերի հաղթողներին:

Մարին ԱՂԵԿՅԱՆ

Մշտական արժեքներին նվիրված դասեր

«Ընտանիքը հասարակության բջիջն է», «Երեխաները մեր ապագան են»՝ այս թևավոր խոսքերը լոկ արտահայտություններ չեն, եթե համեմված են գործով: Մայիսյան դասերը Մոսկվայի «Վերածնունդ» կիրակնօրյա դպրոցում նվիրված էին համընդհանուր մարդասիրական դարավոր արժեքներին՝ սերմանելու երեխաների մեջ կայուն ընտանիքի, պետության ու պետականության գաղափարը: Դասերն անցկացվեցին Երեխաների պաշտպանության օրվա, Ծնողների համաշխարհային օրվա, Ընտանիքների միջազգային օրվա շրջանակներում: Եվ չմոռանանք, որ այդ հատկանշական տոները բաժանվում են մայիսի 28-ով, երբ 1918 թվականին Հայաստանը դարեր անց վերականգնեց իր պետականությունը, որի լուռ վկան է Սարդարապատի հուշահամալիրը:

Նկատի ունենալով, որ շատ երեխաներ իրենց արձակուրդներն անցկացնելու են Հայաստանում, Թանգարանների միջազգային օրվան նվիրված դասերի շրջանակներում խոսվեց այն պատմական վայրերի մասին, որոնք պետք է այցելել՝ պապերի երկիրը ու պատմությունը ավելի լավ ճանաչելու համար. Մատենադարանից մինչև Ալ. Սպենդիարյանի տուն-թանգարան, Տաթևից մինչև Օշական գյուղ՝ ի խոնարհում մեծն Մաշտոցին և նրա գրերի գյուտին, որը մեզ ամուր կապում է աշխարհի տարբեր անկյուններում ապրող յուրաքանչյուր հայի հետ:

Կարևոր է ընդգծել, որ կիրակնօրյա դպրոցը մշտական կապի մեջ է և հաճախակի բաց դասեր է կազմակերպում ոչ միայն աշակերտների, այլև ծնողների հետ, որոնք հանդես են գալիս թեմատիկ զեկույցներով: Ի դեպ, շատերը դպրոցի նախկին սաներն են, որոնք այսօր մեծ սիրով իրենց զավակներին բերում են հարազատ կրթօջախ:

Եվ, իհարկե, ինչ մայիս, առանց վերջին զանգի տոնի: ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցում տեղի ունեցավ ավանդույթ դարձած XXXVII «Վերջին զանգ»-ը, որն ամփոփեց 2024-2025 ուսումնական տարին: Հանդիսավոր միջոցառումը կազմակերպվել էր նախկին Լազարյան ճեմարանի, ներկայիս՝ ՀՀ դեսպանության հանդիսությունների մեծ դահլիճում: Միջոցառման պաշտոնական մասը մեկնարկվեց Հայաստանի

Հանրապետության օրհներգով, որից հետո ողջույնի խոսքով հանդես եկավ ՌԴ-ում Հայաստանի Հանրապետության դեսպան Գուրգեն Արսենյանը, իսկ շնորհակալական խոսքով ելույթ ունեցավ դպրոցի տնօրեն, մանկ. գիտ. թեկնածու Շողիկ Փահլևանյանը:

Հանդիսավոր միջոցառումը կազմակերպվել էր դպրոցի ուսուցչական համակազմի ջանքերով (հայոց լեզվի ուսուցիչներ՝ Շողիկ Փահլևանյան և Աննա Հովհաննյան, հայրենագիտության ուսուցիչ՝ Քնարիկ Վարդանյան, երգի և երաժշտություն ուսուցիչ՝ Արփինե Սամվելյան, ժողովրդական պարերի ուսուցիչ՝ Նանե Մարգարյան):

Այսպիսով, միահյուսելով կրթության, հայապահպանության ու ընտանիքի գաղափարը՝ «Վերածնունդ» դպրոցը պատրաստ է իր դռները բացել 2025-2026 XXXVIII ուսումնական տարում:

ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոց

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է:
Հղումը պարտադիր է:
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝
www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝
Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ